

ծովը, և վերջի յուսահատութիւն կը-  
 յայտնէ: Աքանջելի է վերջի տան զգաց-  
 մունքը և սրտաշարժ սէրը, որով բո-  
 լոր աշխարհք մոռցածի պէս՝ միայն  
 իր ծնողը կը հրաւիրէ ողբալու ան  
 կեանքին վրայ որ անիկայ տուեր է  
 իրեն, ու ծովը անինայ կատաղութե-  
 ուտեւրու վրայ է: «(Ը)րուաւ գնաց, կը-  
 սէ, արև կտրձին», ու կարդացողին  
 միտքն ալ հետը կը թռչի. ինչպէս  
 ամառ իրիկուն պայծառ արևը մըտ-  
 նելու ատեն միակերպ նայելով կար-  
 ծես թէ կամաց կամաց ծովը կընկըղ-  
 մի, սիրտդ անուշ տխրութիւն մը կիջ  
 նայ, և աչքդ ակամայ կը դարձնես  
 ան վսեմ տեսարանէն:

Ահա այսպիսի բանաստեղծութի-  
 ներն են որ ազգին անարատ ու սկզբ-  
 բնական հանձարը կը հասկըցնեն մե-  
 զի: Անարուեստ է ոտանաւորը, բայց  
 կարծես թէ անոր համար ալ աւելի  
 բնական է. վասն զի բնութեան ամէն  
 գեղեցկութիւններն ալ թէպէտ հա-  
 մեմատ են ու սիրուն, բայց մեր հա-  
 շիւններուն ու չափերուն տակը ամէնը  
 չեն իյնար, անոր համար աւելի կը-  
 զմայլեցնեն զմեզ:

ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Եւծ Խորժեաց անմարտնութեան հայոց 1:

Բ

Ո՞ր զտիրոս իշխանաց ՚ի բռին ունի և ամենայ-  
 նի է թագաւոր, ՚ի նորա հրամանաց խաղայ ՚ի մար-  
 դիկ ոգի միաբանութեան կամ անմիաբանութեան.  
 Խնամք նորա բարձրաբարբառ քարոզէն զմիաբա-  
 նութիւն ազգիս մերոյ. վկայեն նմին և անխօս տա-  
 րերք, վկայեն և վէպք ազգաց և նախնեաց մերոց,  
 վկայեն և օտարք և թշնամիք: Գատախազն և եթ է  
 որ յանդիմանութեան երկնից և երկրի ընդդէմ ար-  
 ձանացեալ ասէ՝ թէ Չիք միաբանութի ՚ի հայս . . . :  
 Եւ վնասող ոչ զարհուրիցի յանձն իւր՝ եթէ ՚ի քը-  
 նին մատչիցի դարուցն առաջնոց, յորս երջանկու-  
 թիւն դարանակալ աթոռոց յաւիտենականին՝ էջ  
 հանդեաւ զառաջինն ՚ի գրգաստուն ծոց հայաստա-  
 նեայց ՚ի դրախտին փափկութեան: Գաւառք վե-

հավայք, որ ոչ միայն զհակառակ տարերաց ՚ի  
 հեշտ աղապատանս նկատեալ տեսէք, այլ և զան-  
 տարրականն զհոգի ընդ հողոյդ ձերում խառնեալ  
 սքանչելարուեստ օրինակաւ: Յաշխարհն լուսեղէն  
 ոչ հանդարտեաց զուարթունն հրանիւթ հաճ և  
 հաւան կալ ընդ Աստուծոյ. ՚ի ձեզ մարդ հողա-  
 նիւթեայ և յետ գայթակղութեանն ոչ խզեաց ըզ-  
 զօգ միութեան իւրոյ ընդ նմին: Ի ձեզ ակնարկեալ  
 բնութիւնք համօրէն ՚ի ծուփս անդ համաշխարհա-  
 կան հեղեղաց՝ տեսին զնաւն հրաշաճեմ առ ձեզ  
 հանգուցեալ: Ի լերանց ձերոց մշտնջենաւորաց  
 սրացեալ աղու աղաւնոյն ամէր բերէր զլիւզ ձի-  
 թեւոյ կրկին միաբանութեան աւետչեայ, Աս-  
 տուծոյ և մարդկան: Ի քեզ, ազատք մեր Մասիս,  
 տեսին հարբն մեր, և զգագաթամբք քովք ձգեալ  
 զեթնարփի կամարն հաշտութեան, և ՚ի համբոյր  
 միաբանութեան կապեցան ընդ Աստուծոյ և ընդ  
 միմեանս ցնծալիցք: Արտասահման ժառանգոր-  
 դացս երկնից՝ միակ գրաւական և շաղկապ ընդ Աս-  
 տուծոյ կրօնն սուրբ, յերկրի անդ մերում կան-  
 զնեաց նախ զիւրն սեզան՝ և զնշանն արուսական յա-  
 ռաջ քան զայլս մերն ընկալաւ պսակ արքունի ՚ի  
 գագաթան Աբգարու: Յերկրի անդ մերում երևե-  
 ցան առաջին ընտանիք, առաջին տոհմ, առաջին  
 ժողովուրդ և առաջին միաբանութիւն: Կախա-  
 վկայք սիրալի միաբանութեանս Կոյ և որդիք նորա  
 սրտիք և մարմնովք անմեկին կացին յերկրէ ան-  
 տի: Գեղանի ոգին միաբանութեանն սարտուցեալ  
 սոսկացեալ յաւերակաց ամբարտակին, ՚ի հայա-  
 ստան սրանայր, և անդ զբնակութիւն իւր հաստա-  
 տեր: Մեկնեալ տոհմք ազանց ՚ի Սենաարայ՝ ջը-  
 րուին ըստ իւրաքանչիւր խառնախօս լեզուաց ընդ  
 երեսս երկրի. մերքն միաբան և միաբարբառ՝ միոյն  
 հայկայ ձանաջին որդիք և վիճակ. և ՚ի սերտ ևս  
 պնդեւ զմիութիւն աշխարհին յընտանեկան կենաց  
 առնեն սկիզբն, և մերժեն զօրէնս բազմակնութե-  
 ղառիթ ընտանի խռովութեանց:

Առ այլս յազգաց ամենայն տանուտէր ուրոյն  
 քաղաքի և թագաւորութեան էր իշխան. զոր և տե-  
 սանեմք յայտնապէս ՚ի խուժան թագաւորացն Քա-  
 նանու, յորոց զհարիւրսն Յեսու և Ադոնիրեզեկ  
 միայն կոտորեցին. իսկ մեր նախարարք թէպէտ և  
 փառօք և շքով ոչ ինչ նուազեալք քան զնոսա, միոյ  
 գլխոյ անսային, և միաբանք էին ընդ նմա ՚ի մարտս  
 պատերազմաց. որպէս ասա և ՚ի յարձակել անդ  
 Նեբրովթայ՝ փութայր Վարդոս և ՚ի հայի ապառի-  
 նէր: Բազում վտանգաւ անձանց խրատեցան այլքն  
 գալ յօրէնս միապետութեան և քաղաքական կե-  
 նաց. և իբրև ՚ի հարկէ զամենայն իշխանութիւն ՚ի  
 մի ոք աւանդեցին՝ բռնաւորք ՚ի ներքս անկան ՚ի  
 նոսա, և նեղութիւնք ՚ի վերայ ժողովրդեանն կու-  
 տեցան. վասն այսորիկ առ օրինադիրս անդրա-  
 պաւինէին դարման չարեացն գտանել. իսկ մերոյ  
 աշխարհիս նախիշխան թէպէտ և զնախարարեանն  
 նուաճեալ ունէր, այլ քաղցրացաւ ամենեցուն գա-  
 ւազան նորա, և իբրև զբնական օրէնսն՝ քաղաքա-  
 կանքն ընդուներ լի մերոցն գտան:

Գաղաձանութք էին մերքն բնութեան մարդկան  
 յաւուրց անտի Նեբրովթայ. և խորագէտ խորհրդ-  
 դով զաղէտս օտարաց ՚ի խրատ գգուշութե անձանց  
 առեալ, և զնէթ անգամ անմիաբանութե անհետ  
 առնել հնարէին յազգէն. վասն այսորիկ պատուէր  
 դնէր Արամ ազգացն նուաճելոյ՝ զտիրական բար-

բառն Հայոց ուսանել. յայն սակա և Վաղարշակ պատուիրէր զքաղաքացին և զիմական հանգիտապատիւս համարել. և ոչ վերիպէին նոքա 'ի հրամանացն, զի սիրով և ոչ իշխանութեամբ էր հրամանն. որպէս զԱրամայ զգոռ աշխարհակալէն վկայէ մերս Երոզոտ. «Այլ աշխատասէր և հայրենասէր լեալ, ասէ, լաւ համարէր զմեռանելն 'ի վերայ հայրենեայ»: Եւ զՏիգրանոյ զսիրելոյն, «Իւղով և մեղու զհասակս ամենեցուն պարարեալ», զի ա. մենեքեան միաբան զուարճացին: 'Նովին սիրով դարձեալ Վաղարշակ զյուշարարսն կարգէր զերկտսին, զուգահաւասար ունել զկշիւս արգարութեան և զազգասիրութեան. նովին և Արտաշէս 'ի բարգաւաճել զաշխարհն' 'ի մի շուք պերճութեան պճնէր զձև ամենայն մարդոյ: Ի նոյն 'ի հոսանս յորդաբուղն սիրոյ և դու ողբալից և տանելից Վահէ, զահ Մակեդոնացոյն շիջուցեալ, պարիսպ անյաղթելի զանջս քո կառուցեր 'ի քոյոցն պաշտպանութիւն. և թէպէտ անկար արիւսպէս, այլ յիշատակ ալգասիրից ամբարձաւ անդէն անմուռանալի:

Եւ մի ոք զարմացի, աղաչեմ, իբրու զի 'ի միաբանութենէ յանկարծ յազգասիրութիւն թուփցիմք ընթացեալ. քանզի բաժանել զուսա 'ի մի մեանց այնպէս է, որպէս թէ զսէր յանձն իւր պատուել. զի ամենայնի զօր և շողկապ զսերն ծանեաք, և զմիաբանութիւն աղգի' սիրոյ ծաւալուամն հաւատամք 'ի սիրոս ժողովրդեան իբրև 'ի սիրոս բարեկամաց: Ապա նոյն առաքինութիւն էր որ զԱրշակեանս, զԱրտաշէսեանս և զՏիգրանեանս ընդ ցամաք և ընդ ծով պսակազարգ ճեմեցուցաներ, և առ ոտս արշակունի դահուն ածէր թափէր զիշխանս և զիշխեցեալս առ հասարակ. նոյն առաքինութիւն էր որով զմահ յաչս եղեալ թափ 'ի թշնամիսն ետուն Վաղարշ և խոսրով, զի մի ձեռն օտար խոռովեցուցէ զխաղաղութիւն իւրեանց աշխարհին. . . :

Եւ այն ո՞ իցէ որ իջանէ 'ի բերդէ անտի սրտաթունդ խայտալով՝ երկաթ և մանգոլիոնք և բազմաբեր սպռադէնք չարկանեն 'ի նա արհաւիրս, և ոչ ինքն նոքիմք զթշնամիս իւր պակուցանէ. և ընդէր. զի ետես զորդիս իւրոյ ազգին, զորդիս գթոյ իւրոյ 'ի վտանգի մեծի, և աղեկիզեալ դիմէ թեատարած, փարի զմահագէն գրկօքն. «Յիս և յիմ վերայ, ասէ, ամենայն զէնք. յարիւն իմ շիջուցէք զծարաւդ մարդախանձ. խնայեցէք 'ի ժողովուրդդ. ո՞ սայր ինձ, տուն Արամայ, մէն մի մահունս մեռանել ընդ ամենայն որդուց քոց». . . : Եւ ընդ բոլոր ասպարէզ դառն տանջանացն անցեալ, քաջութեամբ պատարագի 'ի վերայ ազգին: Վե՛հ ինձ իմս Սմբատ քան զաթենացին Վոգրոս, և նախանձելի քան զՎուրսիոս:

Ոչ այնպէս հայելոյ 'ի հայելի ճառագայլօք շող արձակեալ և ծնանին, որպէս սիրոյն ազգեցութիւնք 'ի սիրոս իշխանացն և իշխեցելոց մերոց ցոլացան. նոքա երազք 'ի կարկառել զձեռս, սոքա երազադոյնք 'ի պինդ ունել զնոսին. անբակտելի կապեալ նոքա ընդ տեարսն՝ որպէս և սոքա ընդ հայրենիս, ոչ 'ի փառս անդ ևեթ Հայկալ և Տիգրանայ, այլ և յեղերական դաշտին ուր Արայն գեղեցիկ անկեալ գնի. ոչ 'ի շողալ ևեթ թագին 'ի ճակատ Պարոյրայ, այլ և յանկանել պսակին 'ի ճակատէն Վահէի. զի «Սէր հայրենեաց, որպէս

ասաց ոմն, վառեալ մի անդամ՝ ոչ ևս շիջանի. թէպէտ և է երբէք զի ընդ մոխրով յիշատակաց գաղեալ կայ»: Մինչդեռ ամենայն երկիր սարսէր յԱզգեսանդրէ և 'ի Սելեկիացոցն բռնութենէ, Արուարդ և Արտաւազ յայտ իմն առնէին, թէ զուր է ջան նոցա առ միաբանասէր և առ տիրասէր ճգամբք ժողովրդեան իւրեանց:

Ի թշնամեաց տագնապք անդադարելիք, և 'ի մէջ՝ ճիգն անընկճելի. և եթէ յետ բազում դարուց յաջողէ այլազգեաց վտարել զոմանս 'ի ծնելական գաւառացն, բայց ոչ և զփաբանական ոգի կորզել 'ի սրտից նոցա: 'Նուազունք են թուով, և անզորք զօրութեամբ, այլ գիտեն զի «Չիք տկար քան զճնճուրկ և ոչ անդէն քան զծիծառն, այլ միաբանութեամբ վանեն զբազէ»: Ալակից լինին Ռուբեն և Վասիլ, Թորոս և Լևոն, և կան մնան անասանելի: Յապուշ կրթին նախարարք այլազգեաց, Յիանայ Բիւզանդիոն, և աւազորեար կայսերն Յունաց շղթայակապ առաւիկայ Թորոսի:

Սակայն մի ինչ է յորում անմիաբանք յոյժ ելրկին թագաւոր մեր և ժողովուրդն իւր. և յիմ արդեօք: Ի ջանս անդ որով դուն գործեն զմի մեամբք գլել հայրենասիրութեամբ: 'Նոքա առ փոքր ինչ համարեալ զսովորութեան ինամս ազգին, նորանոր վտանգաց լինին դիմագրաւ վանս ազգին, տարադէմ գնացեալ յաշխարհս հեռաւորս և յազգս անծանօթս: Եւ ժողովրդեանն զայս տեսեալ, ոչ հանդուրժէր չկալ «Ի միասիրտ միաբանութեան գործոց պատերազմին, որպէս աղգէ ոմն պատմագիր, մարանչել 'ի վերայ որդուց և կանանց իւրեանց, և 'ի վերայ աշխարհին գնել զանձինս իւրեանց մինչև 'ի մահ. . . փոխանակ ընկի տերանց իւրեանց»: 1: Եւ եթէ Մերուժան մեքենայէ 'ի գահ ելանել, Սահակ դարանեալ 'ի մահ պսակէ գնա. եթէ Վասակ զհետ իւր ձգէ գունդ մի ողջոյն, միաբանութիւն աստուածընտիր զօրացն հզօրագոյն հանդիսանայ 'ի վրէժ հայրենեաց. և զօրագլուխ առաքինեացն Վարդան մեծ, հրաշալին խոյնեան միաբանից: Ո՛հ, և ո՞ր ուրեք ընդ արեգակամբ երևեցաւ սիրտ մասնեալ յերաշխեպա ազգասիրութեան քան զՎարդանայն: Փոքր են առ նովաւ կիրք Թեմիստոկլի և Վորիդանու և Հոսեգուրեայ. զի ոչ ընդ արտաքինս ևեթ կամ լոկ ընդ ներքին թշնամիս հարկ 'ի վերայ կայր նմա կռուել աստանօր, այլ և ընդ կարևոր սիրելիս, այլ և ընդ սէր անձին գլխովին: Բարեւ. ոչ դիտեմ աստանօր, զարմանալ եթէ զարհուրել, զի յանկարծ ուստ իմն նկուն տեսանեմ 'ի սրտի քաջին զամենայն սէր, և զազգասիրութիւն ևեթ յաղթական. . . :

Ուր առաւել նշմարին պատճառք հերձուածոց, անդ առաւելեալ են փառք միաբանութեան. և 'ի ծուփս անդ Բագրատունեաց ոչ կասին Աշոտք և Մարզպետունիք ոգևով չափ ճգնել 'ի վերայ տեարց իւրեանց: Ծերունիին Վահրամ առաքինանայ քան զԲուսի արաքացի 'ի ցրուել զխորհուրդս Սարգսի. նաև ուժացեալքն ինքնին առ վայր մի 'ի հայրենեաց՝ փութան սրբել զկեղտ անուանն կամաւ կար նահատակութեամբք: Սմբատ յարիւն իւր լուանայ զատելութեանն գրիծ: Ապլխարիպ իւրովի ճողպարէ զոր ինքնին արկ 'ի վտանգ, և միաբանութեան քան թէ քաջութեան նշան յաւերժական

Թողու գերկաթն վարսեալ 'ի գուռն երկաթի:

Եւ զի այլ յերկարիցեմ զքանս . վկայեսցեն օտարք և թշնամիք միաբանութեան ազգիս մերոյ . վկայեսցէ Չամբսիս որ ամենայն գրգանօքն հանգերձ ոչ կարաց յանկուցանել զԱնուշաւան , և ոչ Օգոստոս զԱրգար՝ մինչ չև դարձ արարեալ սոցա յաշխարհն հայրենի: Ըամիրամ վկայեսցէ տագնապեալն 'ի վրիժուց տիրասէր ժողովրդեան Արայի , և խուճապեալն 'ի կարգալ զյարալէզան՝ առ 'ի կեանս կոչել զայն որ կենդանի էր 'ի յիշատակս ամենեցուն: Այլ յառաջ իսկ քան զամենայն գուռնձ վկայեսցես , կենդանի հարուած տանն Արշակունեաց , դու ինձ բարձր բարբառով վկայես Ըամիտն , « Երանի՛ որ Հայոց գնդին տէր իցէ , այնպիսի տիրասէր և միաբան և միամիտ զորացն »:

Ի կարկել այսպէս օտարացն վկայութեամբք մերոյ ոտսիսն , ես ինքնին արդ անցեալ 'ի մէջ ասեմ . Առ փոքր ինչ գրէի զայսչափ առաքինութիւն մերոցն , եթէ ոչ գոյին 'ի ներքս անգ 'ի նոսա ընտանի պատճառք անմիաբանութեան . քանզի առաքինութիւն անդ փառաւոր երևի՛ ուր հակառակաց յաղթիցէ . և ահա ո՞ր գրգիւռ հզորագոյն յանմիաբանութիւն քան զազատական օրէնս նախարարացն մերոց . ո՞ր հրապոյրք ազգողականք քան զնոյն 'ի նախանձ և 'ի փառասիրութիւն . և զնարգ բնաւ հանդիսացան մերքն յայսպիսի կիրս: Իմաստութիւն կարի իմաստութեամբ: Չփառասիրութիւն յօշան և եթէ առին առաքինութեան իբրև զմոլութիւն գովել , և գիտացին հանդարտել 'ի չափու , հրաշալի յարգարեալ զհանգէս միաբանութեանն: Իսկ եթէ ոք անլուր ինչ և տարօրինակ գրիցէ գգըրգուութիւնն սակաւս ցեղից ուննց , որպէս զՍղիտունեացն և զՈրդունեաց , թուի ինձ թէ նա 'ի սպառ և յամբոյ մրկաց անշարժս կամիցի տեսանել ըզժառաստան տերևալից կամ զմեծն ովկիան . և ոչ իցէ նորա քննեալ տեսեալ զնուովս , զպատերազմունս , զգաւաճանութիւնս , զբանութիւնս տերանց և զեւեռութիւնս հպատակաց որ յԵւրոպա՝ վասն օրինաց պայազատութեան կալուածոց: Քանի՞օն գարք և կեանք ծախեցան մինչև գաղարեցին վընասք և վտանգք իրացն . և ոչ գիտեմ թէ գաղարեցի՞ն իսկ 'ի սպառ: Եւ զվարդ ոչ յանչափս զարմասցուք ապա ընդ մերսն , զի և 'ի դարս անգ օգիտութեան յայն չափ գեղեցիկ առաքինութեան եկին , մինչև 'ի հազարամեան պետութիւնն հազիւ թէ երկիցս կամ երիցս գժտութիւնք եղեն 'ի նոսա: Ա՛ւր երևեցաւ երբէք 'ի Հայս պժգալին այն տեսիլ քաղաքամարց Եւրոպայ , ուր մեծատուն 'ի գրգանս փափկանայ , և տնանին նոզմս զհետ նմին արձակէ: Աբանչանայր Պարսիկն , ասէ Եղիշա , եթէ որպէս շէն կայր երկիրն յորմէ այնչափ գանձք 'ի գուռն երթային . և ոչ գիտէր զի հաւասարութիւն ժողովրդեան , և իշխանացն առատաձեռնութիւն էր որ զայն տնօրինէր: Եւ եթէ այս առաքինութիւն թերի էր 'ի մեզ , քանի՛ ողորմ աղետից ոչ պատահէր Հայաստան աշխարհ , մանաւանդ յանիշխանութեան անգ , և 'ի հարստահարութեան այլազգեաց: « Թէպէտ և ոչ ունէին թա-

գաւորառաջնորդ , և ոչ արտաքուստ օգնական զոք յօտարաց , ասէ պատմագիրն , սակայն անձանց առաքինութեամբ . . . համագուռն ամենայն զօրք նախարարացն յիւրաքանչիւր տանէ 'ի մի վայր գային » 1:

Իսկ ո՞ր ազգ կամ ո՞ր ժողովուրդ 'ի Ներքովթայ ցիլքե՛ք Ըամիան անցեալ ընդ բունութիւնս Սելևկիացեոց , ընդ գաւաճանութիւնս Պարսից , ընդ կեղծաւորութիւնս Յունաց և Հռոմոց , ընդ անգթութիւն հագարացեոց , Սկիւթացեոց և ամենայն խժից , և ցայսօր երևելի լինիցի իբրև զազգ կենդանի: Սփիւռ աւերակք Բաբելոնի և Նինուէի և Մեմփեայ , ո՛ւր իցեն որդիք տերանց ձերոց: — Ըուռ և եթէ կան . զի 'ի բազում դարուց մոռացան զանուանս նոցա . զի միաբանութիւն և եթէ է որ ընդ դարս բազումս ձգէ զկեանս ազգաց: Ի կերպարա նափոս լինել անդ ազգաց և գաւառաց Ասիոյ , տունն Թորգոմայ յաւուրց անտի տապանին մինչև ցայսօր ժամանակի վկայ և տեսող ամենայն փոփոխութեանցն՝ իւրով նախկի բարբառովն պատմէ ամենայն ազգաց զանց իւր և զնոցա . . . Եւ 'ի բառնալ անկանել անգամ արքեպիսկան գահուն՝ ուխտ Հայաստանեայց եկեղեցւոյ զմիաբանութիւն ազգին պահեաց անվտանգ , զիմաստութիւն առեալ օժանդակ . իմաստութիւն որ ծաւալեալ տակաւ յամենայն գաւառս պանդխտութեան Հայոց՝ 'ի մի միաբանութիւն ածէ զմիտս և զսիրտ ամենեցուն: Յայս և 'ի սոյն նպատ առաքեցաւ ոգի Նորոյս Հայաստանի , և յարեալ 'ի միջի մերում Միխիթար մեծ , պատրաստել զսիրտս որդւոց առ հարս իւրեանց , ածել զանհաւանս 'ի գիտութիւն ճշմարտութեան , բժշկել զբեկեալս սրտիւք 'ի կարծեաց անմիաբանութեան՝ որ զսիրտս և զմիտս և զբազուկս միանգամայն լքուցանէ յազգասիրութեան ջանից:

Ձեզ մնայ այսուհետև , ո՛վ վեմական կաճառ իմաստնոցը հայրենասիրաց , ձեզ մնայ շնչել ըզհոգի Հօրն ձերոյ 'ի սիրտ ամենայն ազգին . զազիտութեան փարատել զեւաւոր , քաղալերել զնոսա՝ եթէ բնաւ զնախանձ կամ զմախանս տեսեալ յոք՝ գայթակղեսցին 'ի կարծիս անմիաբանութե . զի ոչ է պարտեզ այնպէս գեղեցիկ , որ խոտ ինչ անպիտան երբէք ոչ բուսուցանիցէ: Ձեզ մնայ մանաւանդ տնկել 'ի սիրտս մատաղերամ մանկուտոյս զոր տունն Թորգոմայ 'ի պատանգս սիրոյք ձերոյ առաքէ՝ զազգասիրութիւն և զիմաստութիւն , և զօրիւք միաբանութեան սերտել զնոսա: Եւ ձեզ , մանկտեակք սնեալք 'ի գիրկս այսբանեաց ազգասիրաց , և ձեզ մնայ միաբանութե՛ն հետեւել առաքինութեանց նոցին և խրատուց . և առատաձիր օրհնութիւն երկնազօր աջոյդ , ո՛ սատուածարեալ Հայրդ հասարակաց , կնիք և հաստատութիւն լիցի ջանից սոցա , և վաստակոց իմաստուն ակմբիս , և սրտեւանդն ուխտից նուաստիս:

1 Եւէն Գ: